ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ»
Փակ բաժնետիրական ընկերություն

Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, 0910, ք. Մեծամոր, հեռ./ֆաքս - (37410) 28 06 69, (37410) 28 85 80,
կապի օպերատոր - (37410) 73 98 30, էլ.փոստ - anpp@anpp.am, anpp@haek.am

№ E/13/1419-22 առ "23" 06 2022թ.

«Սեյրան Բալասյան Արթուրի» ԱՁ-ին

[Ծանուցում ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-33/22-9-01/074
պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ]

Հարգելի՛ պարոն Բալասյան,

«ՀԱԷԿ» ՓԲԸ կարիքների համար «լուսավորման սարքեր և լամպեր» ապրանքների ձեռքբերման նպատակով 2022թ. փետրվարի 16-ին հրապարակված «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-33/22» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և «Սեյրան Բալասյան Արթուրի» ԱՁ-ի միջև 2022թ. ապրիլի 1-ին կնքվել է թիվ ՀԱԷԿ ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-33/22-9-01/074 պայմանագիրը (այսուհետև պայմանագիր)՝ 196125 (հարյուր իննսունվեց հազար հարյուր քսանհինգ) ՀՀ դրամ ընդհանուր գնով: Համաձայն պայմանագրի հավելված № 1-ի (Տեխնիկական բնութագիր–գնման ժամանակացույց) լուսավորման սարքերի և լամպերի մատակարարման ժամկետ է սահմանվել պայմանագիրը կնքելուց հետո 30 օրացուցային օր՝ մինչև 30.04.2022թ.:

Սույն թվականի ապրիլի 14-ին մատակարարել եք լուսավորման սարքեր և լամպեր (հարկային-հաշիվ Բ № 0177501450 առ 14.04.2022թ), որոնց ստուգման արդյունքում (Ակտ № 04.22-066 առ 15.04.2022թ.) հայտնաբերվել և արձանագրվել է, որ մատակարարված ապրանքները չեն համապատասխանում պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրերին և հետ է վերադարձվել Ձեզ՝ առաջարկվելով թույլատրելի ժամկետում փոխարինել մատակարարված ապրանքները՝ պայմանագրի պահանջներին համապատասխանող ապրանքներով:

Ձեր ընկերության կողմից սույն թվականի մայիսի 24-ին մատակարարված ապրանքների (փոփոխված հարկային-հաշիվ Բ № 4630939888 առ 12.05.2022թ) ստուգման արդյունքում (Ակտ № 054.22-154 առ 24.052022թ.) հայտնաբերվել և արձանագրվել է, որ մատակարարված ապրանքները նույնպես չեն համապատասխանում պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրերին, որի մասին Ձեզ գրավոր ծանուցվել է:

Տեղեկացնում ենք, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն պայմանագրի 2.1.7 կետի համաձայն միակողմանի լուծում է «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և «Սեյրան Բալասյան Արթուրի» ԱՁ-ի միջև 2022թ. ապրիլի 1-ին կնքված թիվ ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-33/22-9-01/074 պայմանագիրը: Հայտնում ենք նաև, որ Ձեր կազմակերպության նկատմամբ կկիրառվեն նաև պայմանագրի 6-րդ կետով սահմանված տույժերը և տուգանքները, ինչպես նաև ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն Որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 45-րդ կետի պահանջները:

Գլխավոր տնօրենի տեղակալ,
ընդհանուր հարցերի գծով տնօրեն՝ **Ս. Հ.Մաթևոսյան**

Կազմեց՝
ԳԲ առաջատար մասնագետ՝
Ա. Գրիգորյան
Հեռ. 010-28-29-60, 33-08